ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.7. Ադրբեջան: Բնակչությունը, տնտեսությունը

• • •

Հետագա տարիներին երկրից արտագաղթեցին, հեռացան ազգային փոքրամասնությունների տասնյակ հազարավոր ներկայացուցիչներ՝ ռուսներ, հրեաներ, որի արդյունքում Ադրբեջանն այսօր համարվում է ազգային կազմով միատարր երկիր: Բնակչության շուրջ 92%-ը կազմում են ադրբեջանցիները, ավելի քան 2%-ը՝ լեզգիները, 1,3%-ը՝ ռուսները և թալիշները: Մի շարք ազգերի ներկայացուցիչների թվաքանակը պաշտոնական վիճակագրությունը չի նշում: Ադրբեջանում տարածված կրոնը ***մահմեդականությունն*** է: Դավանողների թիվը կազմում է բնակչության 97%-ը:

• • •

Բնակչության 49,9%-ը կազմում են տղամարդիկ (ինչու՞): Երկրի տարածքում բնակչությունը տեղաբաշխված է անհավասարաչափ: Խիտ է բնակեցված Կասպից լիճ-ծովի առափնյա գոտին՝ հատկապես Ապշերոնյան թերակղզին ու Լենքորանի դաշտավայրը, ինչպես նաև Կուր-Արաքսյան դաշտավայրը և Կուրի հովիտը: ՈՒրբանացման մակարդակը շուրջ 53% է: Խոշոր քաղաքներ են **Բաքուն** (2,3մլն բնակչությամբ, ագլոմերացիայում՝ ավելի քան 2,8մլն բնակիչ), **Սումգայիթը՝** շուրջ 350 հազ., **Գյանջան՝** (Գանձակ) 330 հազ., **Մինգեչաուրը**, **Խիրդալանը**, **Նախիջևանը**, **Շիրվանը:**

Տնտեսությունը: Ինչպես ԽՍՀՄ մյուս հանրապետությունների, այնպես էլ Ադրբեջանի տնտեսությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկում ապրեց ու զրկվեց նախկին տնտեսական կապերից: Վերջին տարիներին տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում իրականացվում են տնտեսական ու տեխնոլոգիական վերազինումներ՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:

• • •

Էլեկտրաէներգետիկան զարգացել է տեղական վառելիքային և ջրաէ-ներգետիկական պաշարների հիման վրա: Տարեկան արտադրվում է ավելի քան 26մլրդ կվտ/ժամ էլեկտրաէներգիա:

Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալում ***մեքենաշի-նության*** դերը փոքր է: Թողարկում են նավթի ու գազի արդյունաբերության համար սարքավորումներ, էլեկտրատեխնիկական արտադրանք, բեռնա-տար մեքենաներ (ՄԱԶ և ՈՒԱԶ մակնիշի), մարդատար մեքենաների (Օ-կա մակնիշի) ու տրակտորների (Բելառուս մակնիշի)՝ հավաքում Եվլախում: Կառուցվում է հայրենական ավտոմոբիլաշինության առաջին գործարանը:

• • •

Բուսաբուծության զարգացման համար հիմք են բարենպաստ հո-ղակլիմայական պայմանները, ընդարձակ հարթավայրերը՝ Լենքորանի, Կուր-Արաքսյան դաշտավայրերը, նախալեռնային և լեռնային սևահողային տափաստանները և Կուր, Արաքս ու այլ գետերից սնվող ոռոգման հա-մակարգերը: Դրանց շնորհիվ խոնավ մերձարևադարձային շրջաններում աճեցնում են ցիտրուսներ, թեյ, բրինձ, չոր մերձարևադարձերում՝ նուռ, նուշ, խաղող, ծիրան, բոստանային մշակաբույսեր: Կուր-Արաքսյան դաշտավայրը հիմնականում բամբակագործական շրջան է: Ամենուրեք մշակում են բան-ջարեղեն, իսկ նախալեռնային սևահողերում և Կուր-Արաքսյան դաշտավայ-րում՝ հացահատիկ (ցորեն, եգիպտացորեն, բրինձ):

• • •

Ադրբեջանում արագ զարգանում է ***տրանսպորտը:*** Ներքին բեռնափո-խադրումներում և ուղևորափոխադրումներում առաջատար է ավտոմոբի-լային տրանսպորտը: Երկաթուղային տրանսպորտը Կասպիցի առափնյա մասը կապում է Իրանի և Ռուսաստանի հետ, իսկ հյուսիս-արևմուտքով՝ Վրաստանի հետ: Հայ-ադրբեջանական հակամարտությամբ պայմանավոր-ված, չեն գործում Հայաստան Ադրբեջան երկու երկաթուղիները՝ Տավուշով և Սյունիքով: Ծովային տրանսպորտը կարևոր դեր է խաղում արտաքին բեռնափոխադրումներում:

• • •

Հետխորհրդային տարիներին կտրուկ փոխվել է արտաքին տնտեսա-

կան կապերի աշխարհագրությունը (ինչու՞): Գլխավոր գործընկերներն են Թուրքիան, Մեծ Բրիտանիան, Բելառուսը, Իսրայելը, Պակիստանը, Կենտրոնական Ասիայի երկրները: Արտահանման մեջ գլխավոր դերը պատկանում են նավթին ու նավթամթերքներին, բամբակին, գործվածքներին, պարենամթերքին: Ներմուծում են մեքենաներ և սարքավորումներ, հումք, կիսաֆաբրիկատներ, պարենամթերք:

Ադրբեջանը ՄԱԿ-ի անդամ է: Անդամակցում է միջազգային մի շարք կազմակերպությունների:

• • •

Հայերը մեծ ներդրում են ունեցել Կասպից լիճ-ծովով բեռնափոխադրումների ու արտաքին տնտեսական կապերի զարգացման գործում: Հայերի միջոցով զարգացել են տնտեսության այլ ճյուղեր ևս՝ շերամապահությունը և դրա հենքի վրա՝ մետաքսագործությունը, պտղաբուծությունը ու խաղողագործությունը, մի շարք արհեստներ և այլն: Հայերի դերը անգնահատելի է Ադրբեջանի տարածքում գիտության և մշակույթի, սպորտի, կրթության, հայ դպրոցաշինության գործում: Հայ ճարտարապետները, ճարտարապետ-շինարարները կառուցել են բազմաթիվ պետական-հասարակական և բնակելի շինություններ ու կոթողներ:

• • •

Մետաղաձուլությունը զարգանում է տեղական ու ներկրվող հումքի բազայի վրա: Սումգայիթը սև և գունավոր մետաղաձուլության, իսկ Մինգեչաուրը՝ գունավոր մետաղաձուլության (ալյումինի արտադրություն) կենտրոններ են:

Երկրում ***քիմիական արդյունաբերության*** ձեռնարկությունների թիվը անցնում է 100-ից, որոնք թողարկում են նավթամթերքներ, սինթետիկ կաուչուկ, ավտոդողեր, պլաստմասա, պոլիէթիլեն, յոդ ու բրոմ, դեղորայք:

Թեթև արդյունաբերությունը հենվում է սեփական բնական և արհեստական հումքի բազայի վրա: Թողարկում են բամբակյա, բրդյա և մետաքսյա գործվածքներ (Գյանջա, Բաքու), տրիկոտաժ, կոշկեղեն, գորգեր (Գյանջա):

• • •

Ադրբեջանը ***շիա-մահմեդականության*** երկիր է, որոնց բաժինը տարբեր տվյալներով կազմում է մահմեդականների 65-85%-ը: Մահմեդական կրոնի շնորհիվ Ադրբեջանի բնակչության բնական աճը անհամեմատ բարձր էր՝ մոտ

10‰, քան Հայաստանում և Վրաստանում: Ադրբեջաներենը պատկանում է ***Ալթայան*** լեզվաընտանիքի ***թյուրքական*** լեզվախմբին:

• • •

Հազարամյակներ շարունակ ապրել են գրեթե բոլոր շրջաններում: Նավթի արդյունահանման, վերամշակման ու արտահանման գործում մեծ ավանդ են ունեցել հայ արդյունաբերողները, որի վառ ապացույցներից են Ալեքսանդր Շիրվանզադեի մի շարք ստեղծագործություններ (փորձեք հիշել): Հայերի ջանքերով է կառուցվել Բաքու–Բաթում նավթամուղը: